

Աղբիւրի յաւելած

Լոյս է տեսնում շաբաթը. մի անգամ կիրակի օրերը

№ 46 կիրակի 30 նոյեմբերի | ութերորդ տարի 1897

Հրաւիրում ենք մեր մշտական ընթերցողներին առաջիկայ 1898 թ. համար տարածել Աղբիւր—Տարազը հայ ընտանիքներում: Խնդրում ենք ունեւոր հայից, որ իր անկարող դրացու համար էլ բաժանորդ գրվի և նրան ընծայաբերէ այդ հանդէսները: Աղբիւր—Տարազը միակ հայ պատկերազարդ թերթերը են մեր մէջ, որ ծառայում են իրրև ընտիր ձեռնարկ և ընթերցարան մեր մանուկ սերնդին և հայ ժողովրդին: Աղբիւրի տարեկան գինը 3 ր., Տարազինը 6 ր.: Առաջիկայ 1898 թ. պրեմիաները՝ Ալբոմ և Մայրական Խախ շատ չքեղ են և հետաքրքրական:

ՄԻՔՐՈՑԻԼ ՓԱՇԱ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

—

Այսօր, երբ տաճկահայերը յայտարարուած են դաւաճաններ սուլթանի գահին և նրա պետութեան, ու հալածուում, զրպարտուում են իբրև անհաւատարիմ հպատակներ, այսօր իսկ այդ տէրութեան կայսր սուլթան Համիդը իր լայնատարած պետութեան մէջ բացի հայից՝մի ուրիշ մարդ չէկարողացաւ գտնել, որին անսահման կարողանար հաւատալ իր անձնական գոյքը,անձնական գանձը, որ բախտի ամենաճանր վայրկեաններում թագաւորների էլ միակ փրկութիւնն է...

Սակայն հայերի տիրասիրութիւնը, հաւատարմութիւնը որ դարում, որ իշխանութեան ներքոյ էլ կամենաք՝ անվիճելի սեպհականութիւն են մեր թշուառ ազգին:

Ներկայ նոյեմբեր 6/18-ին Կ. Պոլսում վախճանուած սուլթանի անձնական գանձի մինիստր Միխայէլ-փաշա Փորթուգալեան և սրա տեղը դարձեալ հայազն պաշտօնեայի՝ Յուիանեան Սագըզիճ նոյն պաշտօն յանձնելը, ապացուցանում են, որ սուլթանը հայերին դաւաճան և անհաւատարիմ հպատակներ չէ ճանաչում և միայն գործիք դարձած՝մի քանի պետութիւնների շահախնդրական ծրագիրներին՝

անմեղ տեղն է կոտորում հայ ժրաջան, աշխատասէր ժողովրդին:

Միխայէլ - փաշա Փորթուգալեան մինչև կեանքի վերջը մնալով տաճկաց պաշտօնեայ, մնաց և մինչև այդ օրն էլ լաւ հայ, խօսքիս ամենալաւ-դարձակ ծաւալով, և ազնիւ մարդ հաւատարիմ նիւրական զգացմունքներին...

Հանգուցեալ Միխայէլ-փաշա Փորթուգալեան ծնուել է 1842 թ. Կ. Պոլսում; Պարիզի հռչակաւոր Մուրադ-Ռափայէլեան դպրոցի սանն է, Այվազեան եպիսկոպոսի վերատեսչութեան օրով:

Միխայէլ փաշա Փորթուգալեանի դասընկերները այժմ հասարակական, գրական գործիչներ, մեծ պաշտօնեաներ են: Սրա ընկերներն են եղած Եգիպտոսի կրթական նախարար հայազն Արթին փաշա, Մեհմէտ խան, պարսից նախկին դեսպան Լոնդոնում, Մատթէոս Մամուրեան, Մարկոս Աղաբէկեան հրապարակախօսները և այլն:

Հայ մինիստր Փորթուգալեան Տաճկաստանում վարել է պատասխանատու պաշտօններ. մաքսային խորհրդի անդամ, ֆինանսների մինիստրի օգնական և վերջը սուլթանի անձնական գանձի մինիստր:

Միխայէլ-փաշան յայտնի էր իբրև լաւ ֆինանսիստ և ունի թէ այս ճիւղի վրայ և թէ հասարակ.-գրական, քաղաքատնտեսութեան վերաբերեալ շատ գրաճքներ:

***

Այստեղ աշունքին խամրում է տերեւ ու
սըգում երկիրը,
Հովերը տխուր տաղեր են երգում:
Ես խոներիս մէջ գարունն եմ զգում ջերմ
ու սիրալիր,
Գարուն, որ յաւէտ փթթում է, ծաղկում:
Այստեղ եր կրիվրայ ծունը են խոնարհում
ու պաշտում չարին,
Անարգ ստրկութեան շղթան են կըրում:
Իսկ ես կուզէի, որ ջարդուէը շղթան, տիրա-
նար բարին
Եւ ապրէը յաւէտ մարդկանց սրտերում:
Այստեղ հեզ համբոյրն իր քնքուշ թաւշով
զգում է շիրմին,
Սակայն կասկածոտ, կամաց է հնչում:
Իսկ ես այնպիսի համբոյր կուզէի դրոշմել
քո այտին,
Որ խանդ ու աւիւն վառէը քո սրտում:
Այստեղ, նազելիս, քեզ ծանր են թըւում
կեանքի յեղգ օրեր,
Դու սիրում ես ինձ, բայց սառն ու տրտում:
Իսկ ես բոցավառ նըւիրում եմ քեզ ոսկի
ցընորքներ,
Ոսկի ցընորքնե՛ր, որ միշտ են ապրում...

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ

ՀԱՑԹԱ—ՓԻՐԱՏ *)

(Տասնութերորդ դարի սկզբից մի անցք)

Է.

Չադրի ճեռեւանքը

Փիրատի ապարանքում խորին անդորրութիւն էր տիրում. ննջած էին դռնապան, թիկնապահ, սպասաւոր, սպասուհի. մի խօսքով տասնեակ ծառաներ, բոլոր պալատը թաղուած սև խաւարով և անդորրութեամբ, միայն Հայթայի ննջարանն էր լուսաւորուած գիշերային կանթեղով: Ղուրթնի, մետաքսահիւս Հալէպեան անկողնում ննջած էին այր ու կին. նրանց մեղմ, ներդաշնակ շնչառութեան շըշունչը խառնուելով հինաւուրց անիւաւոր ժամացոյցի թիք, թաք-թրաքին խռովում էին տիրող լռութիւնը:

Տիկին էլիճ կծկուած էր վերմակով, հազիւ նրա

*) Տես Տարազ № 45.

չքնաղագեղ դէմքի մի մասն էր երեւում, այն էլ կիսասքող թուխ մազերի ալեակներով: Փիրատ վաշա ընկած էր քամակին, կրծքից վեր բոլորովին բաց, ջլապինդ, մուստ բազուկներն հոլանի տարածած, քնած էր խաղաղ և անփոյթ կերպով:

Ժամացոյցը տասն երկու զարկեց, Հայթան զարթեցաւ: Աչքերը տրորեց, վեր ելաւ, դէպի պահարանն ուղղեցաւ. երբ շիշը տեսաւ, յանկարծ օձից խայթուածի պէս մի քայլ յետ ընկրկեցաւ ու կանգնեց մտածելով:

Նրա մէջ յանկարծ զարթած էր յիշողութիւնը, կայծակի արագութեամբ իմացական հորիզոնում փռուած մտապատկերների միախմբումը. նա տեսնում էր սկզբից մինչև ի վերջ կատարուած անցքերի պատկերը:

Նախնական մտատիպարներն աւելի թարմ, պարզ և որոշ էր տեսնում, միւսներն հետզհետէ տժգոյն, նսեմ, հեռաւոր առարկայի, ուրուականի, կամ մեծ մասամբ մոռացուած երազի պէս էր յիշում...

Նա որոշակի տեսնում է, աչքով հետևում է հէնց իր անձին Փաշին—ֆէօշքը գնալու ժամանակ, տեսնում է այգում շարուած բոլոր մեծամեծներին, Զիային, զատուն, սուրճ, չիպուղ ընդունելուց յետոյ՝ չորս անբաժան բախտակից ընկերները քաշւում են քիչ հեռու, խմում են լրացած լուսնին նայելով... Այժմ երթալով խաւարում է պատկերների շարքը, ծխի սիւնի նման տարածւում է և կորչում հեռաւոր այերքում... իրանց մէջ է տեսնում ծուռբերան զատին... նա խմեցնում է... նրա հետ շըրջում են այգում. մի ինչ որ շառթ է առաջարկում, —իր հաւանութեամբ եթէ ոչ խաբեբայութեամբ,— կնքում է... յետոյ վիճում է այդ մասին... ընկերքը գալով ուզում են զատուն կտրել... Զիան վախչում է... Հանդէսը վերջանում է... Ապտուլլահ, Մուստաֆա իրան տուն են բերում...

Այս բոլորն աննկարագրելի արագութեամբ յիշելով՝ յետ կանգնեցաւ պահարանից:

—Ես ինչ արի, Աստած իմ,—շշնջաց նա,—շառթ, հէնց օղու մասին... առանց նրան ես մեռնում եմ, նաև իմ ընկերները չեն ներում... բայց՝ ինչ է շառթը, խօմ ես մահմեդական չեմ... ոհ... ոչ, ոչ, ամեն յոյս կորած է, եթէ ես դիմեմ ուխտին, դաւաճանեմ կօշիկի պէս հագած կրօնիս՝ ամեն ինչ կըկորցնեմ, այո... ամբն ինչ, այն ժամանակ ինձ չեն պաշտպանիլ և արենախում ենիչէրիք, եթէ էլիճ ների, իսկ՝ եթէ չըներէ, ամուսնալուծուիլ... ես ինչ եմ գործել՝ Աստած իմ... բայց՝ ինչու մինչև այսօր ինձ չէին առաջար-

կում «շառԹ»՝ այժմ Ջիայի խնճոյքին, նրա տապալած օրը... Սպասի՛ր, հասկացայ, ա՛հ... անառա՛կ, անառակ Ջիա, այո՛, այո՛, այդ քո գործն էր, այն ծուռ-բերան քեաֆէԹաուին խօսում էր նա... ԹիւնապահՀս առաջ կաշառած էր մի մեծ քսակով, բայց՝ ինք չէր գիտէր ԹէՀ ինչու, եԹէ ոչ պիտի զգուշացնէր ինձ... նա Թելադրեց և ես բռընւեցայ, յաջող որսորդուԹիւն, Ջիա: Էլ ինչ եմ սպասում պահարանին առած, փակե՛մ, հեռանա՛մ... ո՛չ, սպասի՛ր, —դէպի կնոջը կողմը նայելով, —լաւ է, նա ննջում է, նա չէ լսում:—Դուցէ վերջին անգամն եմ խմում քեզ, մաստիքա՛, վերջին մնաբարովն ասեմ: Կամ այսուհետև քեզ միայն ծածուկ պիտի տեսնեմ... քիչ խմեմ...

Փիրատի ձեռները դողդողում էին, ահով նայեց իր կնոջ կողմն ու մի ումպ պարպեց: Ազմուկով անկողին մտաւ, որից իսկոյն զարԹեցաւ էլիֆ:

—Ա՛հ, զարԹա՛ծ ես, Փիրատ ջան,—շշնչեց նա տարփագին փարելով ամուսնին պարանոցը,—այդ որչա՛փ էիր արբած... գլուխդ իսկի խելքի կտոր չէր մնացել, ինձ չէիր ճանաչում, հայհոյում, գոռում էիր. «էլիֆս ո՞ւր է,—ո՛վ է այս անառակ կինը,—ասում էիր ինձ,—պուրս խուկեցէ՛ք, եԹէ ոչ հիմա մօացու կովի նման մասմաս կըջարդեմ սրան:—Ես եմ, Փիրատ ջան,—պատասխանեցի քեզ փարելով,—քո էլիֆն եմ, դու ինձ չե՞ս ճանաչում, չե՞ս ճանաչում քո ամուսնին:—«Ա՛հ, էլիֆ ջան,—մրմռացիր սայԹաքելով,—դու ես եղել, ձայնդ իմ էլիֆինն է... Որքա՛ն պէաուրուԹեամբ մերկացուցի քեզ, աղաչեցի, լացի որ Թոյլ տուիր... ուզում էիր սաւայ գնալ, Ջիան սպանել... յետոյ մի բան պատմեցիր, յիշո՞ւմ ես:

—Ո՛չ, չեմ յիշում, ինչ պատմեցի, Հոգեակս...

—Պատմեցիր—Հառաչելով ասաց տիկինը,—զատուն մօտ շառք անելդ... ասացիր քեզ խաբած են...

—Զո՛ւռԹ... այո՛, յիշում եմ ոտոյգ է:

—Սո՞յգ է,—դունատելով, տխրուԹեամբ Հարցուց էլիֆ, լսածին չըՀաւատալով, շիտկւեցաւ անկողնին մէջ,—խելագարւա՛ծ էիր, սիրելիս, փորդ դե էր մտել, քեզ ո՛վ ասաց այդպիսի յիմարուԹիւն անել...

—Իրաւունք ունիս, Հոգի՛ս, ես էլ Հէնց դրա մասին եմ մտածում: Այն գարշելի ծուռ բերան զատին շառԹ անել տւեց, որ էլ արաղ չըխմեմ. ես՝ էլիֆ ջան, ես տխմար անասունս շառԹնամէն կնքեցի... վերջացաւ...

—Ուրեմն Հիմա...

—Այդ դու գիտես...

—Ինչպէս ԹէՀ ես գիտեմ, դաւել են քեզ, պարզամիտ քաջս, դու այսուհետև էլ չես կարող խմել, եԹէ խմես... ո՛հ, Աստուա՛ծ իմ, Փիրա՛տ, կըլուծւի մեր ամուսնուԹիւնը... ես Հիւլ-ուլա լինե՛մ, ես առանց քեզ մի րոպէ ապրի՛մ, կամ մի օր, մի ժամ, մի րոպէ օտարի գրկի մէջ մնա՛մ... Բնա՛ւ, ո՛հ, լինի սպանիր՝ Փիրա՛տ, կամ շառԹդ պահի՛ր... այնպէս չէ՞ շառԹդ պիտի կատարես և չըԹողնես որ քո սիրելի էլիֆը խայտառակւի, կամ՝ յուսահատուԹիւնից ինքն իրան սպանէ:

—Էլիֆ ջան, այդ նիւԹի վրայ ես քեզանից շատ եմ մտածում. սարսափում եմ... դու ինձանից բաժանւի՞ս, խայտառակւի՞ս, ո՛չ... ես պիտի աշխատեմ տեղի չըտալ: ԵԹէ՝ Հակառակ դէպքում, պատահեցաւ խմել, որովհետև պիտի բաժանւինք, խայտառակւինք, գերըՆտրում եմ մեր մահը...

—Անշո՛ւշտ, Հոգեակդ եմ, ես ուրախուԹեամբ կըմեռնիմ քո գրկի մէջ, ինձ խողխողող աչդ կըՀամբուրեմ, քան ԹէՀ կ'ապրեմ խայտառակած... այո՛, Համամիտ եմ քեզ:

—Բայց՝ էլիֆ, եԹէ ուզենանք, կարող ենք առաջւան պէս երջանիկ ապրել, ազատ և Հաստատուն յուսով ապրել:

—Ապա՛, մէջոց ցոյց տո՛ւր...

—Դու քրիստոնէի աղջիկ ես:

—Ճշմարիտ՝ Հայ-քրիստոնէի աղջիկ եմ:

—Ի՞նչ կ'ասէիր՝ էլիֆ ջան, եԹէ քեզ տանէի քրիստոնէական աշխարհ, երկուսս էլ քրիստոնեայ լինէինք, պսակւէինք, աներկիւղ ապրէինք մինչև ի մահ: Քրիստոնեայ լինինք, էլիֆ, որի սկզբունքներն ու վարդապետուԹիւններն ազատ են մեծաց ինում Հետևորդներին, ուր չկայ բռնուԹիւն խղճի: Նա սուրբ է և զերծ ամեն տեսակ լարծուն կեղտոտուԹիւնից, նա չունի այնպիսի օրէնքներ, որպիսին շառքն է: ԵԹէ ինձ լսես՝ մենք ունինք Ահագին գումար, նոյն պէս երկուսի մեծագին զարդեր: Գաղտնի, դրանցից դիւրատարը կառնենք, մնացածները կըձախենք, կ'երԹանք Կ. Պոլիս, Մէկքէ ուխտ երԹալու պատրւակով, այնտեղից կանցնենք Փրանսիա, Իտալիա, մի խօսքով ուր որ կամենանք...

—Այդ անկարելի է,—սառն կերպով պատասխանեց տիկինը,—իրօք, ես քրիստոնէի դուստր եմ, բայց քո ասածն անՀնարին է, մենք կըբռնւե՛նք, ցուղակը կ'ընկնենք, այն ժամանակ աւելի՛ վատ կըլինի...

—Լա՛ւ,—Հառաչելով իսկոյն նիւԹը փոխեց

Ֆիրատ, – մինչ չենք կարող այստեղ իսկ ապրել, օրինակ՝ եթէ կամքս խմել ուզէ, միայն քո ներկայութեամբ խմեմ...

—Ի՞նչ ես ասում՝ Ֆիրատ, և դա անկարելի է, չէ՞ որ քո շառաթին կդաւաճանես, մեր օրինաւոր ամուսնութիւնը կ'ոչնչանայ, ո՛չ... դու մի ճանապարհ միայն ունիս, պէտք է անխախտ կատարես շառաթդ, բնաւ չըխմես օղին: Ես առաւօտեան իսկ ժողովել կրտամ շիշերն ու դաւաթները, կըթափեմ մոտիքան և ամեն ինչ կվերջանայ: Ես մաղի չափ չեմ կարող օրէնքից շեղուել...

—Էլիֆ չգիտէ, ես ինձ լսիր, թող որ տանը մէջ, խիստ ծածուկ օրէնքը մի դաւաթ խմեմ... եթէ դուրսը չ'ասենք՝ ո՞վ պիտի գիտենայ:

—Աստուած գիտէ,—ասաց Էլիֆ խորհուրդ կերպով մատը դէպի ձեղունը բարձրացնելով,—դու շառաթը նրա հետ ես արել, ո՛չ թէ Զիայի հետ գրազ գրել, որ ես կարողանամ ներել, կամ սիրոյդ պատճառաւ մանաւանդ խղճի խայթով տառապել: Դու ուզում ես Աստծուն խաբել, վա՛յ ինձ, դա աններելի մեղք է, Ֆիրատ, ո՛չ, ո՛չ, ինձ սպանիր, կամ այդ հայհոյիչ յոյսերը մոռացիր: Ես նւիրուած եմ կրօնին, Հոգիս մարդա րէին, սիրտս ու մարմինս միայն քեզ է պատկանում... եթէ կարողանայի շառաթը դրժել, չօժարակամ յանձնն կառնէի քո առաջարկութիւնն իրագործել, քեզ հետ հեռանալ մեր երկրից:

Ֆիրատ նախատեսած էր արդէն, գիտէր՝ որ հնար չկայ, սակայն փորձում էր մի ելք գտնելու յոյսով: Մինչև ի լոյս աշխատեցաւ համոզել, անդրդուելի մնաց Էլիֆը, պնդելով իր հաստատուն կամքի համեմատ, աղերսեց վերջապէս արբեցութեան:

—Խօմ մօրդ կաթը չէ, Հոգիս, – ասում էր ամուսնին համբուրելով,—մի՛թէ օղին ինձանից շատ ես սիրում, թող գոնէ մեր սիրոյն համար, ենթադրէ թէ ամենևին խմած չես կեանքիդ մէջ:

Էլիֆ հանգիստ առաւօտն ելնելուն պէս, սրտակներ, վանակնեայ ընտիր բաժակներ ժողովեց փաշայի սենեակներից, իր ձեռօք դոցեց մառանի պահարանում: Ֆիրատ աչքով հետևում էր նրան համակուած խորին տրտմութեամբ:

Նրա սրտի խորքում տահում էին անկերպարան մութ ամպեր: Մի քանի տարուց ի վեր նա լսում էր նրա խորքից իր անձի դէմ մի տեսակ բողոք, իր խիղճն իրան անւանում էր ուրացող, վանողոյ ընկած էր վարկն իր աչքումն իսկ: Նա չէր ախորժում լսել մահմեդական խմամի խօսքն և աղօթքը, ղրւում, խորշում, խուսափում էր հեռի, այժմ բռնւած էր իր ատելի կրօնի ուռկանում, կտրած էր շառաթ, որին թէև ոչ մի արժէք չէր ընծայում, սակայն իր սիրած, պաշտած կինը, Էլիֆը, միայն կրօնական խնդրում տարբերւում էր իրանից: Հայթա—Ֆիրատ որոնում էր միջին ուղի, ինք չէր կարող թողնել օղին, ամուսինը: Մի քանի օր նա զգուշացաւ խմելուց, տիրութիւնը պատեց նրան, երևում էր դիտողին կոպիտ, բարկացուռ, մի տեսական անտաշ էակ, որովհետև՝ կարծես ուզում էր իր կրած զրկանքի վրէժն առնել պատահած խօսակցից: Նա չունէր հաստատուն կամք, նա չունէր այժմ որոշ ուղղութիւն, գործում էր պատահաբար: Ինքզինքն էր անարգում և պատճառն ուրիշների վերագրում: Ի՞նչ անէր, նրա շրթունքը սովորած էին ամեն առաւօտ շօշափել ալքօլի բաժակ, հիմա չըխմէլ, այն էլ իր բնաւ չըյարգած, ղրւելի, ինչպէս ինքն ասում էր, կօշիկի պէս հագած կրօնի շառաթով... Բայց՝ ի՞նչ անէր, եթէ չըպահէր շառաթը, նրա կինը պիտի հեռանար, պիտի ծագէր մի խոր և անբոյժ խայտառակութիւն: Ինք լաւ գիտէր այդ ամենը, գիտէր այդ ամենը, գիտէր՝ որ շառաթը դրժելուն պէս՝ Էլիֆն իր կինը չէր... նեմեհրէմ մտնելով, կամ պիտի մեռնէր յուսահատութիւնից, կամ՝ ինք զինք դատապարտէր այրիութեան: Գիտէր՝ որ Էլիֆի պէս հպարտ կինը չէր յանձն առնի հիւ-ուլա, չէր ների ինքն իր անձին, իր տարփագին սիրած ամուսնի ներկայութեամբ՝ թող թէ կատարեալ, այլ անղօր, անմեղ մի էակի հետ մտնել անկողին իբրև կին, տարփանքի հաճոյքը լսեցնել իր Ֆիրատին, ո՛չ, այդ բոլորն անկարելի էին: Այսպէս մտածելով Հայթան ինքն իրան էր նզովում, ինքն իրան նւաստացնում:

—Դու ինչո՞ւ անսացիր այն ծուռ բերան շանը խօսքերին, ա՛յ եռակի չիմար, քեզ ո՞վ ասաց շառաթ անել, ձեռովդ քանդել երջանկութեան հիմունքը... ես խմած էի... լուրջ մարդը ներկայ չէր, նրա ուրւականին ծաղրեցին Զիան ու դատին... ո՛հ վրէժ, անկուշտ վրէժ... ես երկուսին էլ կախել պիտի տամ, ուշ չէ, վաղը կամ մնւս օրն Ապտուլլահ կըբազմի բղեշխական գահը, ես հէնց այդ օրն այն վատերին պիտի կախեմ: Ի՞նչ է նշանակում արբած, խելակորոյս մարդուն խաբել, վատաբար գաւել, շառաթ անել տալ մի այնպիսի բանի համար, որից անկարող է ենթական խուսափել, հեռանալ և ազատել այդպիսի զօրեղ կապանքների բերումով:

Կարծես ուռած էր Հայթայի գլուխը, խաւարած էին աչքերը. նա չէր կամենում և իր սիրելի ընկերների հետ տեսնւել, խօսել կամ իր անհրաժեշտ պարտականութիւնները կատարել: Խոր տըրտ-

Բհամարկը վիլհելմ I-ի ներկայությամբ արծարծում է Գերմանիայի միաբեռն խնդիրը.

մուրհամբ լցած, աննպատակ շրջում էր քաղաքում, այդպիսով կարծում էր իր սրտի մէջ վառուած դժոխքը մարել...

Անցքից երեք օր յետոյ, առանց Թիկնապահների ուղեկցութեան՝ գնում էր շուկան ի վար, մերթ կանգնում շքեղ զարդարուած կրպակների առաջ, մերթ գնում գլուխը քարշ ձգած, առանց աջ ու ահեակ նայելու:

Յանկարծ ինղինք գոռաւ քաղաքից դուրս, հայոց փոքրիկ տաճարի և առաջնորդարանի առաջ. Հայթհան անվստահ քայլով յառաջացաւ, մի քանի րոպէ անգիտակ հայեացքով իրեւ թէ դիտեց պարթև Հայրապետի տաճարն, ապա առանց իր կամքին, առանց գիտնալու թէ ինչու, դիմեց առաջնորդարան: Արդէն հայք նրան տեսնելով՝ պատրաստուած էին ընդունելու: Հիասթափւեցաւ Հայթհան, երբ բակում պատահեցաւ Ծերունի արքեպիսկոպոսին և քահանաների բազմութեան, որ մուտքի աջ ու ձախ կողմերում կանգնած էին երկիւղով:

—Բուլուրուն՝ էֆէնտիմ, —իսկոյն կանգնեց սրբազանը, —բարով եկաք՝ հազար բարով, համեցէք ձեր ծառայի բնակարանը, թէև ճոխ չէ, զարդարուն չէ նա ձեր վսեմութեան ոսկեձեղուն ապարանին պէս, սակայն՝ ձեր նւաստ ծառայի զոհ ընդունելութիւնը կը յուսամ՝ որ այդ թերութիւնը պիտի լցնէ:

Ֆիրատ նախ՝ կարծես զարմացաւ, մի վայրկեան արձանացաւ տեղին վրայ՝ մոլար աչքերն արքեպիսկոպոսին սևեռած, յետոյ նրա կարճ ճառերն սթափւելով.

—Գնանք, —շշնչաց դողդոջուն ձայնով, —ես ցանկանում էի ձերդ սրբութեանն տեսնել, ձեր ս. օրհնութիւնն ստանալ, աւելի ոչինչ:

Մի անսահման ուրախութիւն փայլեց շրջապատող քահանաների երեսներին: Այդ աստիճան յարգալիր պատասխան արիւնախում Հայթհաների մեծ փաշայից, մինչ նրանք սպասում էին Հայհոյանքի տարափին և բռնութեան:

—Հրամայեցէք, էֆէնտիմ, —ասաց առաջնորդն ոչ նւազ զոհունակ դէմքով, —բարեհաճեցէք գոնէ մի սուրճ ընդունել:

—Արդէն միայն սուրճ... —մրմռաց Ֆիրատ—փաշայ:

Ձոխ չէր իհնարհ, նւաստացած հայոց, պատրիարքից յետոյ գահերէց արքեպիսկոպոսի բնակարանը. նա մի հասարակ, ամուրի մարդու մենարան էր քան թէ առաջնորդարան, ամեն առարկայի վրայ դրւած էր մաքրութեան և պարզութեան դրոշմ:

Սուրճ մատուցւեցաւ մեծ հիւրին, չիպուղը լցւեցաւ դուզի-դուլախ (գառն ականջ) Պաֆրայի ծխախոտով, նա ուրիշ հնիչէրու պէս դիջ-ֆիրէսի (ատամի վարձք) չըպահանջեց մեծարանքն ընդունելու:

—Ես ցանկանում էի ձեր սրբազնութեան հետ առանձին մնալ, —ասաց Ֆիրատ յարգանքից յետոյ, —եթէ կարելի է խելքէք (առանձին) մնանք, մի շատ կարևոր գործ ունիմ...

Սրբազանը նրա ով լինելը չգիտենալով՝ կասկածեցաւ, կարծեց թէ քաղաքավարի կերպով կողոպտելու է եկած անսանձ հնիչէրին: Իսկոյն պաշտօնեաներն հեռացան, մնաց Հայթհան ծերունի հոգևորականի հետ:

—Ձեր վսեմութեան ծառայ եմ, —ասաց սրբազանը մի անհանգիստ ժպիտով և դողդոջուն ձայնով, —պատրաստ եմ:

—Նախ՝ սրբազան Հայր, —շշնչաց Հայթհան՝ ծերունու նիհար, ոսկրուտ ձեռն ակնածութեամբ համբուրելով, մի խօսիք ինձ հետ իրրև հզօր հնիչէրիների մեծ փաշայի, խնդրեմ ընդունէք իրրև ձեր սրբազնութեան գայլերի ճանկն ընկած մի դառն, որ չէ մոռացած իր հոգևոր հօրն ու տիրոջը...

—Ստուգիւ... ինչ եմ լսում, —զարմացած ընդհատեց նա:

—Ես մատաղ քո Աստծուն, սրբազան, քո խաչին, ես խոստովանում եմ, եթէ թոյլ կրտաս՝ կըխօսեմ հայոց լեզւով...

—Խօսիր, որդեակ իմ, —որդեակ բառը դուրս թռուց այրելով սրբազանի շրթունքը.—խօսիր ես քեզ եմ լսում... դո՞ւ, Հա՞յ:

—Այո, Աւետարանին երկրպագու Հայ եմ...

—Փա՜ռք քեզ Տէր, որ գործում ես այսպիսի հրաշքներ... բայց՝ ինչպէս այժմ թուրք և մեծ մեծ վէգիր էք:

—Եթէ կրլսէք իմ փոքր պատմութիւնը.—կակազելով հայերէն խօսեցաւ Հայթհան, —բայց՝ մի գուցէ խլեմ ձեր սրբազնութեան թանդ րոպէներն... արգելք լինիմ ձեր գործին..

—Ո՛չ, իմ կորած գառնուկ, քո դիւտն ինձ թանդ է մինչև իսկ իմ կեանքից, խօսիր, որդեակ իմ, Հայ լեզւով՝ որ այնքան սիրուն հնչեց ականջիս, ես պատրաստ եմ քեզ լսել, ահա, իրօք, հզօր հնիչէրին հայորդի... չեմ կարող հաւատալ... այս կատարեալ հրաշք է...

ՍԷՒԱՆ

(Կըշարունակի)

ՀԱՏԻԿԱԾՆԵՐ

I

Ես եւ նա տարեսարանց ընկերներ էինք, չո՛ր, տո՛ք անապատներ միասին էինք անցել. վերջը հասնելով մարդկանց բնակատեղերին, իրարուց բաժանուանք. ես ա՛ջ կողմը, նա—ձախ կողմը...

Անցան շա՜տ տարիներ. մենք իրարուց ոչ մի լուր չունէինք. շա՜տ ուզում եմ նրան երազումս տեսել, գրկել ու լացել. ուրիշին հանդիպելիս ըրան եմ կարծել. ինչ է մնացել, որ փաթաթեմ պարանոցովը ու արտասուեմ... Այսպէս շա՜տ տարիներ անցան. ես ընջեցի մարդկանց մէջ՝ յաղթեցի, յաղթայ, տաճեցի-տաճայ. շա՜տ վէրերս սացայ եւ շա՜տ յոգնեցի... ոչ ոք մարդկանց միջից ինձ չըսիրեց. ոչ ոքին էլ ես չըսիրեցի. մնացի մենակ. մենակ ապրեցի ու տանջուեցի... Այսպէս ես յոգնեցի մարդկանցից. Խորին կարոտ ըզգացի դէպի ընկերս եւ ընկայ նամբայ որոնելու նրան. շա՜տ որոնեցի. եւ յանկարծ ծովի ափերից լսեցի մի երգ—այն չինաղ, լիքը երգը, որ իմ ընկերը միշտ կ՚երգէր – միասին կ՚երգէինք մեր ոսկի օրերում:

Սիրտս լցաւ այդ հին, սուրբ երգով. եւ ըստացեցի դէպի ծովը. անա՛ ընկերս – նա յոգնած, մաշած եւ կենդանաց կեանքի նոյն վէրհերով ու հառաչածներով. մենք մօտեցանք իրար, ամուր գրկեցինք իրար, համբուրեցինք, լացեցինք ու գրկած իրար՝ ընկանք ծովափին երջանիկ նիրհման մէջ...

II

Ամենակուսական անտառներից ես բռնեցի մի չինաղ թռչուն. դրեցի նրան ոսկէ վանդակի մէջ եւ կախեցի երկնքից: Նա երգում էր շա՜տ խորհուրդաւոր երգե՜ր... Մարդիկ լսում էին այդ երգերը, բայց ոչինչ չէին հասկանում. իսկ ես գիտեր յափշտակուած այդ վեհ երգերով՝ լսում էի անյագ ու հոգով սլանում...

Իսկ մարդիկ ինձ այդ պատճառով ցնորածից էին կոչում...

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Կովկասի Կաթողիկոսարանը Ս. Էջմիածնում

—

Ազգիս Վեհափառ Հայրապետը տեղեկանալով, որ Կովկասի Կաթողիկոսական Իշխան Գրիգորի Սերգէևիչ Գոլիցինը հոկտ. 2-ին սկսած ի. հաճի այցելել Ս. Էջմիածին՝ Գեր. Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսին և Տ. Նահապետ վարդապետին հրամայեց ընդառաջ ելանել Նորին Պայծառափայլութեան Իգդիր աւանը:

Հինգշաբթի Տ. Իշխան Գոլիցինը Երևանի նահանգապետի և իր քարտուղարի հետ՝ շրջապատած բազմաթիւ ձիաւորներով, հասաւ վանքի բակարի դուռը: Այստեղ ժողովրդի կողմից ող ու հաց ընդունելուց յետոյ, Իշխանը դիմեց Գեր. Տ. Գրիգոր եպիսկոպոսին, որ Տ. Մեսրոպը վարդապետի մի քանի խօսքով բարի գալուստ մաղթեց Նորին Պայծառափայլութեանը: Տրդատայ դրան մօտ դիմաւորեցին Հարձր Հիւրին Գեր. Տ. Սուքիաս, Գեր. Տ. Եսայի Արքեպիսկոպոսները, Տ. Նահապետ, Տ. Կարապետ և Տ. Մամբրէ վարդապետները: Տրդատայ դռնից մինչև Մ. Տաճարի դուռը երկու շարք կանգնած էին Հոգևոր Ճեմարանի աշակերտները: Իշխանը ողջունեց աշակերտներին հայերէն բարի լոյս խօսքերով: Մայր տաճարի դրանը դիմաւորեց Աւագ Լուսարար Տ. Մակար եպիսկոպոսը: Հոլոր դիմաւորողների ուղեկցութեամբ Իշխանը մտաւ եկեղեցի և Իջման Սեղանի առաջ աղօթեց: Սեղանի աջ ու ձախ կողմում Տ. Գրիգոր և Տ. Համազասպ վարդապետները շուրջառագեստ կանգնած՝ Ս. Խաչն ու Աւետարանն էին բռնած, որոնց երկիւղածութեամբ մերձենալով համբուրեց Իշխանը և դուրս գալով եկեղեցուց, երկու կարգ շարուած աշակերտների միջով դիմեց Վեհարան:

Կառավարչապետի, նահանգապետի և քարտուղարի համար Վեհարանում առանձին սենեակներ էին պատրաստուած, ուր առանձնանալով, մի փոքր հանգիստ առնելուց յետոյ, հիւրերը առաջնորդուեցան դէպի Վեհափառ Հայրապետի գրսի դահլիճը: Այստեղ ազգիս ներունագարդ Հովսեպեանը Սինոդի անդամոց՝ Գեր. Տ. Երեմիա արքեպիսկոպոսի, Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոսի, Տ. Վահան և Տ. Աշոտ վարդապետների հետ սպասում էր իր հարձր հիւրին: Երբ Իշխանը իր ուղեկիցներով մտաւ դահլիճ, Նորին Սրբութիւնը առաջ եկաւ և դահլիճի մէջ տեղում խաչակնքեց Իշխանին: Նորին Պայծառափայլութիւնը Վեհի աջն առաւ և յետոյ սիրալիր կերպով երկար համբուրեցան, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Սինոդի անդամներին, իսկ Իշխան Կառավարչապետը իր ուղեկիցներին և ապա Նորին Սրբութիւնը հրաւիրեց Մեծ Հիւրին Ծաղկեայ Այանը (դահլիճը), ուր ներս գնաց պ. Նահանգապետը, նաև Տ. Նահապետ վարդապետը և պ. Կոստանդին Իւզբաշեանը իբրև թարգմաններ:

Ծաղկեայ այւանում տեսակցութիւնը տևեց երեք քառորդ ժամ և շատ սիրալիր էր: Թէյ վայելելուց յետոյ Իշխանը թոյլտուութիւն խնդրեց Վեհափառից Ս. Էջմիածնի հնութիւնները և նշանաւոր տեղերը այցելելու և մեկնեցաւ դահլիճից:

Ընդունելութիւնից յետոյ Իշխանը դուրս եկաւ Վեհարանից և դիմեց դէպի Մ. Տաճարը: Տաճարի դրանը ընդունեց Իշխանին Տ. Մակար Եպիսկոպոսը և առաջնորդեց ներս: Իջման Սեղանի առաջ Իշխանը հանեց իր թուրը և այնպէս մտեցաւ Աւագ Սեղանին: Թանգարանը դիտելուց յետոյ, մտաւ Ս. Գէորգայ խորանը, ուր բազմեցրած էին Տաճարի ամենանշանաւոր սրբութիւնները՝ կենաց Փայտը, Ս. Գեղարդ Ս. Լուսաւորչի Ձեռը, Նոյեան Տապանի մասը և այլն: Իշխանը նրանց երկրպագելուց յետոյ, հետաքրքրեցաւ մի քանի հին ձեռագրներով և սանաւանդ ուշադրութիւն դարձրեց Ե'յտերինա Բ. Կայսերուհուոյ նուիրած թանկագին շուրջառի վրայ: Դուրս գալով խորանից Իշխանը բարձրացաւ Ս. Յովհաննու Մկրտչի սեղանը, ուր տեղաւորուած էր նոր օրհնուած Ս. Միւռոնը նոր կամասայի մէջ: Տաճարի ներսը

Բախտաւոր ընտանիք

տեսնելուց չետոյ Իշխանը ելաւ հիւսիսային դռնից և ուղևորուեցաւ դէպի Տպարանը և ապա Ձեմարանը։ Ձեմարանի դրսի դրանը դիմաւորեց Տեսուչը և ներկայացրեց մի պատուաւոր չայտարարուելիւն Ձեմարանի դրուելեան մասին։ Աշակերտներ ժողովաւած էին հանդիսարանում, որի մուտքի առաջ երկու կարգ կանգնած էին ուսուցիչները։ Չէնց որ Մեծ Իւրը մտաւ Ձեմարան, իսկոյն ի պատիւ գալստեան Տ. Կառավարչապետի՝ գանգի ձայնը հնչեց։ Սանդուղի գլխին Տեսուչը ներկայացրեց ուսուցիչներին, որոնցից ամեն մինին Իշխանը հարցրեց նրանց ուսման տեղը և ինչ առարկայ աւանդելը։ Աշակերտները երգեցին Արքայական օրհներգը՝ Տեր պահեա զկայսր մեր, ռուսաց լեզուով։ Այնուհետև դիմեց Ձեմարանի մատենադարանը, ուր այցելուց դրքում հաճեցաւ իր անունը ստորագրել և մտնելով ննջարան, շնորհակալութեամբ մեկնեցաւ Ձեմարանից։

Վեհարանի դրսի դահլիճում ութ հոգու համար սեղան էր պատրաստուած։ Իշխանը մտաւ դահլիճ և ժամը 3-ին մօտ Վեհափառ Հայրապետը օրհնեց սեղանը և նստեցին ճաշի։ Նորին Ս. Օծութիւնը բազմեց սեղանի գլուխը, ունենալով իր աջ կողմից Կոմս Տիզենհաուզենին։ Տէր Կառավարչապետի աջ կողմում նստեցին Գեր. Երեմիա Արքեպիսկոպոսը և Գեր. Տ. Արիստակես եպիսկոպոսը, իսկ պ. Նահանգապետի ձախ կողմում նստեց Գեր. Տ. Սուքիաս Արքեպ սկոպոսը, Իշխան քարտուղարը և պ. Իւզբաշեանը։ Տ. Նահանգապետը և Տ. Կորիւն վարդապետները կանգնեցին Վեհափառի Ամոռի մօտ, որի չետևից՝ աջ ու ձախ տեղ էին բռնել կարմրազգեստ շամիրները։ Տ. Գարեգին վարդապետը կանգնած էր սեղանի միւս ծայրի մօտ՝ Վեհափառի դիմացը։ Ճաշը շատ ճոխ էր և ընտիր պատրաստուած։ Քաղցրեղէնի ժամանակ շամպանեայ առաջ բերին և Վեհափառը գաւաթը ձեռքն առաւ թէ չէ, իսկոյն Իշխանն ընդառաջելով ելաւ տեղից և առաջարկեց Նորին Սրբութեան կենացը։ Վեհափառը առաջարկեց Պայծառափայլ Իշխանի կենացը և ապա Կոմս Տիզենհաուզենին։ Իշխանը առաջարկեց սեղանակից Սրբազանների և ապա միաբանութեան կենացը։ Ճաշը շատ ուրախ և զարճալի խօսակցութեամբ անցաւ։ Վեհափառ օրհնեց սեղանը և Իշխանի ու կոմսի հետ առանձնացաւ Փաղկեայ աչանը սուրճ վայելելու։ Նոցա հետևեցին և Թարգմանները։

Սուրճ վայելելուց և կէս ժամի չափ խօսակցելուց չետոյ, Մեծ Իւրը խրնդրեց Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը և քանիցս շնորհակալութիւն անելուց չետոյ, յայտնեց որ Սևան էլ ցանկանում է այցելել շաբաթ օրը և մեկնեցաւ Վեհարանից։ Մինչև գարբասի դուռը ճանապարհ դրին սեղանակից սրբազանները և հիւրընկալ՝

վարդապետները, որոնց ամենքին առանձին առանձին շնորհակալութիւն յայտնելով և նրանց օրհնութիւնը առնելով, Պայծառափայլ Իշխանը նստեցաւ կառք և հայերէն շնորհակալ եմ ասելով, գոհ սրտով մեկնեցաւ դէպի Երևան։

—

Հոկտ. 4-ին Նորին Պայծառափայլութիւնը մտաւ Սևան, ուր Արժ. վանահայրը, միաբանութիւնը արժանաւորապէս յարգանքով և մեծարանքով ընդունեցին, հարձր հիւրին և նախաճաշիկ առաջարկեցին։ Տ. Կառավարչապետը մեծ գոհունակութեամբ մեկնեցաւ Սևանից։

Արարատ

Մատենախօսութիւն *)

Լունկևիչ Վ. «Երկրի եւ երկնքի մասին»։

Թուս. ձեռագրից *թարգ. Կ. Գ.* 14 նկարներով, Թիֆլիս. 1897 թ. գինն է 10 կ.։

Այժմ կը բերենք մի քանիսը այն պիսի օրինակներից, որոնք նախընթացների պէս մանրիկ անճշտութիւններ անանուն չեն կարող, այլ իրանց թողութեամբ որոշ չափով խախտում են ամբողջ գրածքի կազմութիւնը։

1) Երկրի գնդաձևութիւնը ապացուցանում է հեղինակը ոչ բաւականաչափ պարզ կերպով։ Իսկապէս մի շարք երևոյթներ կան, որոնք ամենը միասին վերջնականապէս համոզում են իւրաքանչիւրին, որ երկիրը (մեր աշխարհը) գնդաձև է և և կանգնած չէ որևէ հիմքի վրայ, կախած չէ որևէ ուրիշ առարկայից։ Երկրի շուրջը կատարած բազմաթիւ ճանապարհորդութիւնները, ծովային մակերևոյթի ուռած (անհարթ) լինելը (մօտացող և հեռացող նաւի օրինակները), ցամաքի վրայ նոյնանման երևոյթը (բարձր աշտարակների կամ եկեղեցիների օրինակը), լուսինը խաւարացնող կլորակ ստւերը (որ երկրի ստւերն է), այն հանգամանքը, որ բոլոր երկնային մարմինները գնդաձև են և այլն։ Բայց այդ երևոյթներից իւրաքանչիւրը առանձին վեր առած չէ ապացուցանում որ երկիրը գնդաձև է, որովհետև նրանք առանձին առանձին կարող են առաջ գալ և ուրիշ դէպքերում։ Պարոն Լունկևիչն այդ բոլորը մի կողմ թողնելով, բերել է միայն առաջին երևոյթը (ճանապարհորդութիւն երկրի շուրջը)։ Որովհետև անդադար դէպի արևմուտք գնալով ճանապարհորդը վերջապէս հասնում է նոյն տեղը, որտեղից նա ճանապարհորդութիւնը սկսել է, կընշանակէ, նա պտտում է երկրի շուրջը։ Այդ ճշմարիտ է։ Սակայն նոյնը տեղի կ'ունենայ եթէ երկիրը գլանաձև կամ կոնաձև (շաքարի գլխի պէս) լինէր, նոյն իսկ եթէ նա հիւսիսայինն և հարաւայինն բևեռներում կամ լինէր ուրիշ առարկաներից (ըստ որում մարդիկ տակաւին հիւսիս-հարաւային ուղղութեամբ չեն պտտել երկրի շուրջը, այլ սովորաբար, դէպի հիւսիսային բևեռ գնացողները երբէք չեն վերադառնում)։ Նոյն իսկ միակ ապացոյցը որ բերած է, դրած չէ ընթերցողի առաջ իր դրականութեամբ, այսինքն չէ ասած թէ բազմաթիւ ճանապարհորդներ այդ փորձերը արած են, այլ հեղինակը ենթադրում է ասելով «եթէ այդպես ու այնպես գնաք»... բայց ընթերցողին կարող է այդ եթէ-ն անիրագործելի թւալ։

2) Տարւայ եղանակների առաջ գալը միանգամայն սխալ կամ մոլին է բացատրած։ Այդպիսի մի սխալի կամ մոլութեան համար առաջին դասատան աշակերտը կարող էր զero ստանալ։ Մենք տարակուսում ենք, չըլինի այստեղ թարգմանիչը մի բան է բաց թողել, կամ գրաշարական սխալի հետ գործ ունենք։

„Եթէ երկիրը մի տեղում կանգնած լինէր,—ասում է հեղինակը — արեգակի ճառագայթները միշտ միևնոյն կերպով կընկնէին նրա վրայ, և այն ժամանակ ոչ ամառ կըլինէր, ոչ ձմեռ, ոչ պարուն և ոչ աշուն„։

Բայց ընթերցողը եթէ մի փոքր ուղիղ երևակայէ, կըգտնէ որ պարոն Լունկևիչի առաջարկած դիրքում ընդհակառակն ամառ էլ կըլինի, ձմեռ էլ, գարուն էլ, աշուն էլ, միայն թէ—երկրի զանազան մասերում, այսինքն մի տեղ միշտ ամառ կըլինի, միւս տեղ միշտ ձմեռ։ Այդպիսի սխալ բացատրութեան հիմք դնելուց յետոյ, գալիս նա է նոյնքան սխալ դրական եզրակացութեան։

„Բայց որովհետև երկիրը անդադար փոխում է իր տեղը, այդ պատճառով (?) արեգակի ճառագայթները միշտ միևնոյն կերպով չեն ընկնում (է՛յ, դուք չարաճճի ճառագայթներ) նրա վրայ. տարւայ մի ժամանակ աւելի ուղիղ, միւս ժամանակ աւելի թեք (Ի՞նչ օյինբազ ճառագայթներ են, կարծես կադրիլ են պարում)։

Այդպէս դէս ու դէն ընկնելով հեղինակը շարունակում է, մինչև որ ոչինչ չէ կարողանում եզրակացնել, որովհետև նախապէս պարզած չէ այդ բոլորի պատճառը, որ է երկրի թեքուած լինելը դէպի իր ընթացքի մակերեւոյթը։ Եթէ երկիրը այդ թեքւածութիւնը չ'ունենար, որքան էլ նա պտտէր արեգակի շուրջը, (ու հէնց իր շուրջն էլ) այնուամենայնիւ միևնոյն երկրամասում միշտ միևնոյն եղանակը կըլինէր, բայց երկրի զանազան մասերում կըլինէին զանազան եղանակներ։ Իսկ երկրի թեքւածութիւնից առաջանում է այն, որ երբեմն նրան հիւսիսայինին կիսագունդն է արեգակին նայում, երբեմն հարաւայինը։ Ու հէնց սրանից էլ առաջ է գալիս իմիջի այլոց այն երևոյթը, որ երբ հիսիսայինն կիսագնդի վրայ ձմեռայինն է, հարաւայինի վրայ ամառայինն է լինում և ընդհակառակը։ Մի երևոյթ, որի մասին հեղինակը խոհեմութեամբ, թէ անխոհեմութեամբ լռութիւն է պահպանում։

3) Գիսաւոր աստղերի մասին խօսելով հեղինակը չէ շօշափում այն խնդիրը, որ իսկապէս ամենից կարևորն է, այսինքը թէ ինչպէս է առաջանում նրանց պոչը։ Չէնց այդ պոչն է, որ այնքան նախապաշարմունքներ է առաջացնում ամբոխի մէջ։ Ուրեմն գոնեա այդ տեսակէտից կարևոր էր նրա բացատրութիւնը։ Զարմանալի է, որ պ. Լունկևիչը բաւական մանրամասն խօսում է պոչաւոր աստղերի մասին, իսկ ուղղակի պոչի մասին բացատրութիւն չէ տալիս։ Երևի ընթերցողն աւելի էլ շւարւում է, կարդալով թէ կան նոյնպէս անպոչ գիսաւորներ։ Այժմ աւելի զօրեղանում է այն հարցը, թէ ինչու ուրեմն շատ գիսաւորներ պոչ ունեն։ Որքան մեզ յայտնի է, պոչի գոյութիւնը բացատրւում է սրեգակի ձգողական ոյժով, ըստ որում գիսաւորի թեթև գազից բաղկացած մթնոլորտը արեգակը քաշում է դէպի իր կողմը ու այդպիսով երկայն շերտ է գոյանում։ Թերևս կան աւելի լաւ բացատրութիւններ էլ, բայց մենք մանրամասն տեղեակ չենք այդ խնդրին, իսկ մեր տեղեակ հեղինակն էլ լռութիւն է պահպանում։

Վերջապէս պ. Լունկևիչի գրածքի

*) Տես Տարազ № 45։

անմշակութեան մի ապացոյցն էլ այն է, որ գրաճ.քը ոչ մի սիստեմ, ոչ մի կանոնաւոր ծրագիր չունի, թէ ընդհանրապէս և թէ մանրամասնութեանց մէջ։ Գրքոյկը բաժանւած է երկու մասի, 1) երկրի մասին, 2) երկնքի մասին։ Գատ լաւ։ Իսկ առաջի մասում խօսւում է մանրամասն նոյնպէս լուսնի մասին, որ աւելի երկնքին է վերաբերում քան երկրին։ Իսկ եթէ հեղինակը այդ արել է ի նկատի ունենալով որ լուսինը երկրի արբանեակն է, երկուսն էլ ուրեմն, այդպէս ասած, մեր աշխարհն են կազմում, այն ժամանակ աւելի սիստեմաբար վարւած կլինէր, եթէ առաջին մասում խօսէր ամբողջ արեգակնային սիստեմայի մասին, որ ընդունւած է մեր աշխարհը համարել։ --Դեռ երկնային մարմիններից շատերի մասին ոչինչ չըխօսած, իսկ ոմանց մասին արդէն խօսած (արեգակի, երկրագունդի, լուսնի) հեղինակը անցնում է տիեզերքի ծագման ենթադրական տեսութեանը։ Մինչդեռ սա պիտի կամ սկզբում լինէր, կամ վերջում, բայց ոչ մէջտեղում։ Ընթերցողին կամ պէտք է ծանօթացնել նախ տիեզերքի կազմութեան հետ, (ինչպէս որ տիեզերքը գոյութիւն ունի) և ապա ենթադրութիւններ անել նրա ծագման մասին, կամ թէ ծագումը բացատրել նախապէս և յետոյ ցոյց տալ նրա ներկայ կազմութիւնը։

Հենց մանրամասնութիւններն էլ շատ տեղ սիստեմից զուրկ են, օրինակ իններորդ գլուխը սկսում է այսպէս. հիմա ես ձեզ կբացատրեմ թէ ինչից եմ առաջանում լուսնի եւ արեգակի խաւարումները։ Իսկ յաջորդ տասներորդ գլուխը. հիմա կաշխատեմ բացատրել թէ իսկապես ինչից եմ առաջանում լուսնի եւ արեգակի խաւարումները։ Ինչպէս ընթերցողը տեսնում է, երկու չիշեալ գլուխները կատարելապէս միեւնոյն խոստումով են սկսւում։ Հեղինակը կանգ է առել 9-դ գլխի մէջ այն բանի վրայ, թէ ինչ են ասում այդ մասին անուսում մարդիկ և պաուսները (ջահիլները ոչ)։ Ուրեմն նա պիտի սոյն գլուխը սկսէր ասելով՝ «Առաջ քան լուսնի և արեգակի խաւարումների, իսկական բացատրութեան անցնելը և այլն»։

Ի վերջոյ ինչ վերաբերում է գրաճ.քի լեզուին, ապա պէտք է ասել, որ նա շատ էլ զտած, մաքրած և մատչելի դարձրած չէ։ Օրինակներ.

1) «Այդ աստղերից ամեն մեկը մի-մի արեգակներ են»։ Այստեղ ենթական եզակի է, իսկ ստորոգեալը յոգնակի։ Պէտք է ասել «այդ աստղերից ամեն մէկը մի արեգակ է, կամ թէ այդ աստղերը մի-մի արեգակներ են։

2) «Միւս աշխարհները, որ գոյութիւն ունին անսահման տարածութեան մէջ, ամեն մէկը կազմւած է իր աստղ-արեգակից»։ «Պիտի լինէր. «Անսահման տարածութեան մէջ գոյութիւն ունեցող աշխարհներից ամեն մէկը կազմւած է» և այլն։

3) «Փորձեցէք տաքացնել ծծումբը եւ հեղուկ դրութիւն կըստանայ»։ Այստեղ «և»-ը ինչ է նշանակում.

4) «Դուցէ ձեզանից ամեն մէկը չըգիտէ, թէ ով էր Գալիլէյ»։ Այդ նըշանակում է, թէ հեղինակի կարծիքով, ընթերցողներից ոչ մէկը Գալիլէյի մասին գաղափար չունէ։ Անշուշտ հեղինակի միտքը այդ չէ եղել, այլ թարգմանիչն է այդպէս դուրս բերել։ Պէտք է ասել գուցէ ձեզանից ոմանք չըգիտեն, թէ ով էր Գալիլէյ։ Կամ թէ գուցէ ձեզանից ո՛չ ամեն մեկը գիտէ թէ ով էր Գալիլէյ։

5) «Բայց մեր երկրի պես լուսինն էլ հանգիստ չէ կանգնած»։ Այդ կարելի է հասկանալ այն մտքով, թէ երկիրը հանգիստ է կանգնած, իսկ լուսինը ոչ։ Ուրեմն անորոշ է։ Չարկաւոր էր ասել. բայց լուսինն էլ հանգիստ չէ կանգնած, ինչպէս և մեր երկիրը։

6) «Եւ ամեն մի այդպիսի պտոյտ կատարում է քսան և ինն օր ու գիշեր»։ Պէտք էր կամ փոխանակ «կատարում է» դնել «տևում է», կամ թէ փոխանակ «քսանուինն օր ու գիշեր» դրել քսան ու ինն օրում (կամ օրւայ մէջ)։

7) «Այդպիսով դուրս է գալիս, որ իբրեւ թէ արեգակը իսկապէս պտտում է երկրի շուրջը»։ Այստեղ աւելորդ է կամ «որը», կամ «իբրև թէ»։

8) «Պիսաւորի պոչը աւելի շուտ կարելի է համեմատել թափանցիկ գազի հետ»... միևնոյնն է թէ «աղւէսի պոչը կաթելի է համեմատել մազի հետ»։ Պոչը (որ ձգւածութիւն, կամ երկարութիւն ունի) պէտք է համեմատել մի ուրիշ ձգւած, երկարաձև առարկայի հետ և ոչ թէ նիւթի հետ։ Թէ-րևս հեղինակը ասած է եղել, թէ պոչը բաղկացած է թափանցիկ գազից, իսկ թարգմանիչը բարեկարգել է նախադասութիւնը։

Նմանօրինակ անուշադիր ոճեր և ձևեր կարող են պատահել իւրաքանչիւր գրաճ.քի մէջ և նրանով լիքն են մեր պարբերական հրատարակութիւնները, բայց նրանք երբէք ներելի չեն հանրամատչելի գիտնական աշխատութիւնների մէջ։

Ս. ԹՈՒՌԱՅԵԱՆՑ

ԽՈՒՎԱՒԹԻՒՆՆԵՐ ԱՒՍՏՐԻԱՅՈՒՄ

Աւստրիայում շարունակում են կրակի հետ խաղալ։ Այդ երկրից մեզ հասած հեռագրական լուրերը ցոյց են տալիս, որ այնտեղ մըտքերի (աւելի ճիշտ՝ զգացումների) յուզած դրութիւնը ոչ միայն չէ անցնում, այլ աւելի ու աւելի զօրեղանում է։ Բայց թողնենք որ լուրերը իրանք խօսեն.

Նիստի դահլիճը (խօս.քը վերաբերում է աւագաժողովին) ծածկւած է պատուաստ թևնոցներով, օձիքներով, փողակապերով, կոճակներով և ակնոցներով։ Գերման Ֆերշէ, դուրս է հանել գրպանից դանակը ու սպառնում է գործադրել, իր գլխին հարւած տւողների պէս։—Թեթև վիրաւորւած են Գհսման ու Մոցեր պատգամաւորները. Զհնհերհերը Վօլֆին պաշտպանելու համար յարձակւեց նախարարական նստարանի վրայ, վերցրեց պատերազմական նախարարի բազկաթոռը և մտադիր էր նետել լեհացիների և չեխերի վրայ։ Ամենից շատ հարւածներ են ստացել ու կոխոտւել Վօլֆ ու Զհնհերհեր գերման-պատգամաւորները (հետաքրքիր է իմանալ, թէ ով է կոխոտւել ամենից քիչ)։ Վօլֆի կինը նստած էր սրահում ու լաց էր լինում, Զհնհերհերի միրուքը վնասւած է (ափսոս միրուք, երեսի քաշքշել են)։ Պատգամաւոր Գօճի քիթը ջարդել էն։ Լէբլօխի քիթը բռունցքահարել են։ Վօլֆն ու Զհնհերհերը փողոցային խօս.քերով (հայոց մամուլից ընդօրինակած կըլինեն) հայհոյում էին նախագահ Ադլրաւովիչին (Աբրահամեան, մի գալիցիացի հայ է։ Այստեղ էլ երևի մեղքը կըբարդեն հայերի վզին)։ Գերման պատգամաւոր Գրեկհեր նստեց ելևմտական նախարարի բազկաթոռի վրայ ու ծաղրաբար

առաջարկում էր չեխերին նախասրարական թղթակալներ։ Աբրամովիչ մատդիր է մեղաւորներին դատարանի ենթարկել (իսկ դատաւորներ նոյն մարդիկը չեն)։ Վոլֆը սպառնում է՝ միւս անգամ ատրճանակով ներկայանալ (իբր թէ ուրիշները չեն կարող նոյնը անել)։ Այսպիսի պատկեր է ներկայացնում երկրի գլխաւոր խորհրդարանը։

Բայց խառնակութիւնները շարունակւում են ու խորհրդարանից դուրս, մայրաքաղաքի փողոցներում։ Ահա թէ ինչ են հաղորդում Վիէննայից.

Երեկոյեան դէմ մեծ խումբեր էին ժողովւում համալսարանի ու պարլամենտի մէջտեղ գտնւող փողոցներում. նրանք ուսանողների մտադրւած ցոյցերի հետևանքն էին։ Ոստիկանութիւնը արգելում էր ցոյցերը, ցրելով ուսանողների համախմբումները։ 40 մարդ է ձերբակալւած (Պոլսում որանք սպանւած կըլինէին)։ Ուսանողների մի փոքրիկ խումբ երգում էր Ռէյնի պահնորդը։ Մի քանի դէպքերում ոստիկանութիւնը ենթարկւեց ճիպոտի հարւածների։ Ժամի տասին հանգստութիւնը վերականգնւեց (երևի ուսանողների սիրտը գարեջուր է ուզել, կամ քնել են կամեցել)։ Նոյնանման տեղեկութիւններ սկսել են ստացւել և Աւստրիայի երկրորդական քաղաքներից։ Օրինակ Պրագայից հեռագրում են.

«Մի քանի պատգամաւորների գալստեան առիթով (Վիէննայից) ամբոխը, որ բաղկացած էր բանւորներից և ուսանողներից, շարժւեց դէպի երկաթուղու կայարանը։ Վենցէսլաւեան հրապարակի վրայ ոստիկաններին քարկոծում էին, ուստի վերջիններս մերկացրին թրերը ու ցրւեցին կուասէրներին։ Միւս օրը երեկոյեան ամբոխային մեծ համախմբումն տեղի ունեցաւ։ Քաղաքի գանազան մասերում ոստիկանութիւնը ցրւեց հազարաւոր ցուցարարներին։ Ցուցարարները դիմեցին դէպի գերմանական թատրոնը (լաւ են ցրւել), փշրեցին լուսամուտները, քարեր նետեցին ոստիկանների վրայ։ Երկու վաշտ ձիաւորներ ու ոստիկանութիւնը ցրեցին ամբոխը։ Մի քանի մարդիկ վիրաւորւած են, իսկ 7 հոգի ձերբակալւած։ Ժամը 9 ½ հանգստութիւնը վերականգնւած էր (երևի շնորհիւ մթութեան)։

Ուրեմն կայծը արդէն սկսել է բռնցավառւել, որովհետև գերմանները չեն կարողանում դիմանալ, որ չեխերը երբէք չեն մտադրւում փոքր առ փոքր կորցնել իրանց ազգային հարստութիւնը՝ լեզուն և գերման ցեղին կուլ գնալ։ Չեխերը կատարեալ իրաւունք ունեն։ Բայց ուր կըհասնի բանը, եթէ գերմանները շարունակեն յամառել։ Նրանք չեն կարող արևմտքում անպատիժ կերպով իրագործել այն, ինչ որ իրանց այակրօն եղբայրները իրագործում են արևելքում։ Աւստրիական սլաւոնները զօրեղ պաշտպաններ կունենան։ Ուստի աւստրիական բոցը կարող է շատ մեծ ծաւալ ստանալ։

գեղարուեստ

Թատրոն, երաժշտութիւն եւ նկարչութիւն

Պ. Վիճոգրադով ունի թանձր բարիտոն և մշակւած բեմական արուեստ։ Մի քանի օպերաների մէջ մանաւանդ նա ոչ միայն սքանչելի է երգում, այլ խաղում է և իբրև հմուտ դրամատիկ արտիստ։

Անցեալ հինգշաբթի, նրա բենեֆիսին հասարակութեան այած ցոյցերը, դափնեայ պսակ մատուցանելը, ծաղիկներ, կանաչներ բեմ սփռելը չափազանցութիւն չենք համարում և դեռ ցաւում ենք, որ մեր երաժշտասէր Թիֆլիսը աւելի ստւար թւով չէր եկել իր համակրութիւնը յայտնելու օպերային այժմեան խմբի ամենաչքի ընկնող արտիստին։

Պ. Վիճոդրադով իր բենեֆիսին երգեց Նէռւսկոյի դերը Ամբիկուճի օպերայում։

—Հայոց թատրոնը Թիֆլիսում շարունակում է յաջողութեամբ ընթանալ և միշտ թատրոն է գալիս մեծ բազմութիւն։

Անցեալ չորեքշաբթի օրը ներկայացրւած Շարագուշակ fայլ դրաման եթէ բովանդակութեան կողմից մի առանձին ինաստ չունի, սակայն դերասանին միջոց է տալիս իր տաղանդը երևան հանելու։ Եւ այդ օրը օր. Խիքարեան կատարեց ingénue dramatique մի ծանր դեր ու ոչ միայն տապալեց պիէսը, այլ տւաւ նրան գոյն և կերպարանք։ Յարգելի օրիորդի աջողութեան աջակից էր պ. Մամիկոնեան, պաշտօնաթող րոտմիստրի դերում։ Տեղ-տեղ շատ լաւ էր նա, բայց երբեմն րելիէֆ երևում էին և դեռ պակասութիւններ, պակասութիւններ, որ անշուշտ կըհարթւեն շատ շուտով, որովհետև այդ դերասանը մեծ քայլերով է առաջադիմում։

—Մալորոսական խմբի րեպերտուարը թարմանում է նոր պիէսներով։ Հետաքրքիր են դրանց ներկայացումները մանաւանդ նրանով, որ ժողովրդական կեանքը շատ ընդարձակ ծաւալով է պատկերացնւում։ Ցաւալի միայն նրանք մանուոն են և միշտ տանջանք, վիշտ է արտայայտում դրանց կեանքը։

—Ուրախութեամբ լսում ենք, որ հագւայ թատրոնական մասնաժողովը արդէն բանագնացութիւններ է սկսել մեր տաղանդաւոր դերասանուհի տ. Հրաչիայի հետ։ Ինչպէս երևում է, մասնաժողովը ոչինչ չի ուզում խնայել ներկայացումներն աւելի գեղարուեստական և կատարեալ դարձնելու։ Անկասկած է, որ տ. Սիրանոյշը շնորհալի դերասանուհի է, բայց այնպիսի պիէսներ, որպիսիք են Կամելիազարդ տիկին, Դարբնոցապես, Ադրիեն Լրկուվրեօր և այլն, որոնք պահանջում են վերին աստիճանի նրբութիւն, զարգացած ճաշակ և հարուստ դիմախաղ —այո, այդպիսի պիէսների համար տ. Հրաչիայի պակասը զգալի է։ Թէև տիկնոջ խաղը նորերս չենք տեսել, բայց նրա անցեալ հռչակը գրաւական է, որ նա և այսօր էլ այն լուսատու աստղը լինի, ինչ որ եղել է 80-ական թւականներին։

Ընսամբլը թէև լաւ է, բայց մերթ ընդ մերթ զգալի է մեր տաղանդաւոր կոմիկ Տէր-Դաւթեանի պակասը և թեթև կերպով տ. Զաքելիանը եւ տ. Փառանձեմիանը։

—

Հագւում շուտով կըներկայացնեն Զուդերմանի դրաման՝ Հայրական տուն, որ մեր աշխատակից պ. Ս. Թառայեանը կոմիտէտի պատւերով թարգմանել է գերմաներէնից։

—

Այսօր կիրակի, կէսօրից յետոյ ժամը 4-ին փակւում է Կովկասի V-րդ պատկերահանդէսը։

Հասակաւոր այցելու է եղել մինչև այսօր 4000 և երեխայ 1500։ Ընդհանուր մուտք 1350 ր.։ Նանդէս են եղել դրւած պատկեր, էսքիզ, էտիւդ 450 կտոր։

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԻՑ

Պատկասանում հրատարակող **Շաւիղ** շաբաթաթերթը դադարել է։ **Շաւիղը** մի ժամանակ հայհոյական, անպատւաբեր ուղղութիւն էր բռնել բոլոր լրագիրների, նոյն իսկ հեղինակների վերաբերմամբ։

—

Ամերիկայի գաղթականները Բուլղարիա գաղթածների նման սկսել են լրագրներ հրատարակել։ Ներկայումս այնտեղ երկու նշանաւոր քաղաքներում—Ուստրում և Նիւ-Եօրկում հրատարակում են Եփրաս եւ Տիգրիս անուններով շաբաթագիրներ։ Կրօնականք չարատևութիւն, որովհետև օտար երկրներում կասկածելի է հայ թերթերի յաջողութիւնը։

—

Ներքին գործերի մինիստրութեան որոշումով կարգադրւել է, որ լուտերական աւետարանական եկեղեցական բոլոր գրքերը այսուհետև պարտաւորւեն յօրինել ռուսերէն լեզւով։

ԼՈՒՐԵՐ

—

Շորեքշաբթի, նոյեմբ. 26-ին, թագաժառանգ Ցեսարևիչ Գէորգի Ալէքսանդրովիչի անուանակոչութիւնն էր։ Թիֆլիսի ուղղափառ, հայ և ուրիշ դաւանութիւնների եկեղեցիներում և աղօթատներում հանդիսաւոր մաղթանքներ կատարեցին, որոնց ներկայ գտնւեցան բարձրաստիճան անձինք և մեծ բազմութիւն։

Քաղաքը առաւօտից զարդարւած էր դրօշակներով և երեկոյեան գլխաւոր փողոցները լուսավառւած։

—

Ռուս. գործ. նոյեմբերի 23-ից հետագրում է. «Հիւպատոսական տեղեկութիւններից, զօրքերի տեղափոխութեան մասին Վանի եւ Էրզրումի մէջ, ենթադրութիւններ է ծագում, որ այդ միջոցները ձեռք են առնւած պարսիկների կողմից սահմանը քանդելու առիթով»։

Ընթերցողը, այս հետագրից անշուշտ կ'եզրակացնէ, որ սա տարածւած լուրի հերքումն է։

—

Բարձրագոյն հրամանով թոյլատրւած է հանգանակութիւն բանալ ամբողջ Ռուսիայում տանկ մնացած կրէտացիների օգտին։

—

Կարսի զինուորական նահանգապետի կարգադրութեամբ այնտեղ սոյն ամսից բացւել է հայ-գաղթականների համար ձրի ճաշարան երկու հարիւր հոգու համար։ Ճաշարանի կառավարութիւնը յանձնւած է երեք հոգու, որոնք ճաշարանի բացման օրը բաժանեցին գաղթականներին զանազան իրեր, որ ուղարկել էր Կովկասի հայոց հարեգ. ընկերութեան Ղարսի տեղական ճիւղը։

—

Բագւում, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրներին, հիմնւում է նաւահանգստային վարչութիւն։

—

Քանի ժամանակ է, որ խօսւում է Թիֆլիսը ելեկտրականութիւնով լուսաւորելու մասին, սակայն մինչև այժմ այդ ցանկութիւնը չ'իրագործւեց։ Ներկայումս քաղաքային վարչութիւնը այդ առիթով բանակցում է մի ֆրանսիական առևտրական հիմնարկութեան հետ։ Յոյս կայ, որ այս անգամ բանակցութիւնը յաջող ելք կ'ունենայ և Թիֆլիսը մօտիկ ապագայում էլեկտրականութիւնով կլուսաւորւի։

—

Իր ժամանակին լրագիրները հաղորդեցին, որ երկու հայուհիներ ձեռնակալեցին Կ. Պոլսում, չհաւատալով կոմիտէի շրջաբերականները բաժանելու համար։ Ըհչեհրի գործակալութիւնն ասելով դրանցից մէկը ազատւեց ռուսաց դեսպանի շնորհիւ, իսկ միւսը չընայելով դեսպանների ջանքերին մընաց բանտում եւ նրա գործը դատարանին է յանձնւած։

—

Թոյլտրւած է բանալու Թիֆլիսում քաղաքային գրադարան, որի կանոնագրութիւնը վաղուց մշակւած և առաջարկւած էր ի հաստատութիւն։

—

„Нов"-ի Կ. Պոլսի թղթակիցը ասում է, թէ „Դուրը տեղեկացել է, որ պետութիւնները պատրաստւում են Տաճկաստանի համար բաւական անախորժ առաջարկութիւն անելու։ Բայց Դուրը, այնուամենայնիւ չի կարծում, թէ բանն այն տեղը կրնասնի, որ պետութիւնները պատառեն Պոլիսը, ինչպէս գրում են անգլիական լրագիրները։"

—

Թանդուեան եկեղեցու շինութեան մէջ հայ գաղթականների ապաստարանհիւանդանոցը, որ գտնւում է մի խումբ կանանց հովանաւորութեան տակ, ընդարձակւեց, որովհետև փակած հայ եկեղեցական ճեմական դպրոցի շինութեան վերին յարկը նոյնպէս յատկացրեց վերոյիշեալ հիւանդանոցին։

—

Լրագրների ասելով, այսուհետև նոտարները կրնշանակւին աստիճանաւորներից որոշ ռոճկով։

—

Բարձրագոյն հրամանով բարոն Մորէնհէյմ, որ Փրանսիայում ռուսաց դեսպան էր, արձակւում է այդ պաշտօնից, մնալով պետական խորհրդի անդամ։

—

Կանանց իրաւունքները Ռուսիայում էլ ընդարձակւում են։ Բարձրագոյն հրամանով թոյլատրւում է կանանց վարել ազատ պաշտօններ, թէ հաշւապահական և թէ նամակագրական բաժանմունքներում ծովային վարչութեան մէջ։

—

Նոյեմբերի 22-ին զինուորական դատարանը Գանձակում մահւան գատապարտեց կախաղանով Ղազախի պրիստաւ իշխան Աբաշիձէի, թարգմանիչ Բոզինեանի և պահապան Իօլչիի սպանութեան մէջ մեղադրւող Մահմադ Սալահին և Մամմադ Քեաբիմին։ Իսկ միւս թուրքերից մէկին ցմահ, երկուսին 15 տարով տաժանակիր աշխատանքների դատապարտեց։

—

Իրաւունք է որաւած ծառայողներին և մասնաւոր ընկերութիւններին դէնք կրելու աւազակներից պաշտպանելու համար։ Այդ մասին տեղեկութիւններ կան ոստիկանատներում, թէ՛ ովքեր և ինչ տեսակի զէնքեր կրելու իրաւունք են ստացած։

Խառն լուրեր

Տաճկաստանում երբէք, ինչպէս երևում է, խաղաղութիւնը չի վերականգնելու։ Հիմա էլ ալբանացիներն են այստեղ ելել և նրանց թիւը հասնում է 5,000-ի։ Պիակովի մօտ արիւնահեղ ընդհարումներ են տեղի ունեցել ալբանացիների և զօրքերի մէջ, որոնք ուղարկւած էին նրանց խաղաղացնելու համար։ Ջմիւռնիայից էլ Սալոնիկ են ուղարկւել երեք ռազմանաւեր։

—Իբրև թէ Բերլինի կաբինէտը հասկացել է, թէ ոչ մի հնարաւորութիւն չկայ այսուհետև հովանաւորել Տաճկաստանին. ուստի Գերմանիան հրաժարւել է պաշտպանել տաճիկ կառա-

վարութեանը, եթէ նա հակառակութիւն ցոյց կըտայ մեծ պետութիւններին։

—Կ. Պոլսի անգլիական դեսպան հայասէր Ֆիլիպ Քըրրին մտադիր է հրաժարել. Քըրրիին տաճիկները բնաւ չէին սիրում և Անգլիայում տաճկամոլների կարծիքով նրան չանցաւոր են համարում այն բանում, թէ նա նպաստեց անգլիական ազդեցութեան անկմանը Կ. Պոլսում։

—Նոյեմբերի 22-ին Կ. Պոլսում դեսպանների ժողով եղաւ կրէտական խնդրի և հայկական խռովութիւնների ժամանակ օտարահպատակների կրած վնասների համար վարձատրութիւն նշանակելու պահանջի առթիւ։

—Յոյն-տաճկական խաղաղութեան դաշնագիրը ընդունեց տաճիկ մինիստրների խորհուրդը և ապա ներկայացրեց սուլթանին ի հաստատութիւն։ Խաղաղութեան դաշնագիրը ստորագրելու մասին բոլոր նահանգներում յայտարարւած է։

—Գերմանիայի կայսրը իր արտասանած ճառում շեշտում էր գերմանական նաւատորմիղը ուժեղացնելու մասին։ Ինչպէս յայտնի է, Վիլհելմը այդ ցանկութիւնը մի քանի անգամ յայտնել է, սակայն րէյխստագը մերժել է։ Հաւանական են համարում, որ այս անգամ էլ կայսրի ցանկութիւնը մերժելու է ռայխստագում։

—Աւստրիայում տեղի ունեցած անկարգութիւնների պատճառով, Բադէնի մինիստրութիւնը հրաժարական տւեց. նոր մինիստր-պրեզիդենտ է նշանակւած բարոն Գաուչ, որին և յանձնւած է կազմել նոր մինիստրութիւն։ Սրանով երևի աւստր. կառավարութիւնը կամենում է հանգստացնել աւստրիացի գերմանացիներին։

—Ամերիկայում կանայք նոյն իսկ քաղաքական գործերում պաշտօններ են ստանում։ Այսպէս Նոր-Հրաունշվէյգում հիւպատոս է նշանակել միսս Եմմա Գարտ։

—Աւստրիայում պարլամենտական խռովութիւններն արդէն անցել են քաղաքները և ժողովրդական յեղափոխութեան կերպարանք են ստանում։ Այսպէս «Нов.»-ին Պրագայից (նոյեմբ. 21-ից) հեռագրում են, որ քաղաքը յայտարարւեց պաշարւած գրութեան մէջ։ Քաղաքապահ զօրքը կրկնապատկւած է։ Ձերբակալւած են 500 մարդ, հիւանդանոցում կան 270 վիրաւորներ։ Փողոցներում շրջում են պահակ զօրքեր։ Համալսարանը, ուսումնարանները և շատ խանութներ փակւած են»։

Ինչպէս երևում է, այդ տեսակ խռովութիւններ Աւստրիայի ուրիշ մասերում էլ են տեղի ունեցել։ Փրուս. գործակալութիւնը հեռագրում է նոյեմբ. 20 ից. «Մինիստրութիւնների միաձայն որոշմամբ Գաուչը կարգադրեց պաշարւած գրութեան մէջ պահել Պրագը, Կարոլինէնտալը, Ֆիժկովը, Վայնբերգը և Ձեմիխովը։ Կարգը պահպանելու համար ձեռք են առնւած անհրաժեշտ պատերազմական միջոցներ»։

—Ֆրանսիայում ներկայումս պալուտից սկսած մինչև լրագրները, ժողովուրդը, հեղինակները զբաղւած են Դրէյֆուս սպայի գործով, որ մեղադրւում էր 1897 թ. դաւաճանութեան մէջ, թէ նա գաղտնի դոկումենտներ է ծախել գերմանական գլխաւոր շտաբին։ Այժմ Դրէյֆուսը վճռւած է իր հայրենիքից. բայց վերջերս յուրեր են տարածում լրագիրներում, թէ Դրէյֆուսն անմեղ է և թէ նա զոհ է վրիժառութեան։ Եւ այժմ ամբողջ Ֆրանսիան յուզւած է Դրէյֆուսի գործով և սպասում է անհամբեր, թէ որքան ուղիղ են նրա մասին տարածւած լուրերը։

—Վերջին տեղեկութիւններից երևում է, որ Սերբիայի և Բուլղարիայի յարաբերութիւնները լարւած են։ Ինչ ասել կը զէ, որ այս բանում սուլթանի մատը խառն է. նա Բուլղարիային երբեմն զիջումներ անելով Մակեդոնիայում, գրգռում է միմեանց դէմ այդ ազգերին։ Վերջերս Իսկուբում ընդհարում տեղի ունեցաւ բուլղարների և սերբերի մէջ. լուր կայ, թէ Միլանն է դիտմամբ այդպիսի ընդհարումները հովանաւորում։

—Ռումանիայի թագաւոր Կարլի Պետերբուրգ ճանապարհորդելու լուրը հաստատւում է։

— Пет. Вѣд. հաղորդում է, որ ռուսաց սրբազան սինոդը վճռել է Պարսկաստանում (Ուրմիա) ռուսաց մշտական առաքելութիւն հիմնել նեստորական ասորիներին ուղղափառ դարձնելու։

— Կարծւում է, որ Գերմանիայի և Տաճկաստանի մէջ պատերազմական դաշնագրութիւն է կնքւած և Տաճկաստանը դառնում է եռապետական դաշնակցութեան մի անդամը։

— Ֆ. Դուբը սաստիկ դիմադրում է Ձէֆէրի կրէտէի ընդհանուր նահանգապետ նշանակելուն։ Նա պետութիւնների մէջ պառակտումն գցելու նպատակով, ուզում է ցոյց տալ, որ Ձէֆէրը հայերի ապստամբութեան ժամանակ արտ. կոմիտէի կողմից ուղարկւած էր Հայաստան, և տաճկաց կառավարութիւնը աքսորեց նրան այնտեղից։

Մեր պատկերները

Բիսմարկը Վիլհելմ I-ի ներկայութեամբ արձարծում է Գերմանիայի միութեան գաղափարը.

Մեր դարերում կատարւած քաղաքական ամենանշանաւոր բարեփոխութիւններից մէկն է գերմանական միութեան կազմութիւնը։ Դարերի ընթացքում կենդրոնական Եւրոպայում տարածւած մեծ ու փոքր գերմանական պետութիւնները շարունակ միմեանց վնասում էին, միմեանց թուլացնում էին, միմեանց նոյն իսկ խորտակում, և այդ բոլորը առաջանում էր ամենաչնչին պատմառներից, աննշան առիթներից։ Մինչդեռ այդ ցանկալի չէր հէնց ընդհանուր մարդկային տեսակէտից, որովհետև քաղաքակրթութիւնը տուժում էր...

—Բանն այն է, որ գերման ժողովուրդը իր նետարդերի մէջ քաղաքակրթական զօրեղ ոյժեր ունի, ինչոր նա պատմութեան մէջ բազմիցս ապացուցել է։ Բայց այդ ոյժերը փոխանակ քաղաքակրթական ուղղութեամբ գործադրելու, գերմանացիք ստիպւած էին սպառել փոխադարձ եղբայրասպան մաքառումների մէջ։ Եւ Գերմանական միութեան պատմական դերն էր այդ սխալը ուղղել։

Գերմանական միութիւնը իհարկէ բուն ժողովրդի ձգտման ու եռանդի արդիւնքն է ինչպէս և պատմական բոլոր փոփոխութիւնները։ Սակայն նրան առաջնորդողները, մարմնացնողները, ձևակերպողները անհատներ են, որոնց մէջ ամենանշանաւոր տեղը բռնել են Վիլհելմ առաջինը և Բիսմարկը, մանաւանդ վերջինս։

Ներկայ համարում պետեղւած պատկերի մէջ տեսնում ենք, թէ ինչպէս իշխան Բիսմարկ արձարծում է իր ծրագիրը Վիլհելմ I-ի ներկայութեամբ և կարգադրութիւններ է անում իր ծրագրի իրականացման համար։ Արժանի է նկատել, թէ ինչպիսի լրջութիւն ու եռանդ ի ցոյս է դնում գերմանացի քաղաքագէտի դէմքի վրայ ու միւս կողմից որպիսի սիրով ու աշխոյժով ականջ է դնում ալեպարդ կայսրը իր պաշտօնեայի դատողութիւններին։

Ձախ կողմում կանգնած է Փրիդրիխը, որի սիրտը լիքն էր ոչ միայն նեղ-ազգային, այլև ընդհանրապէս

մարդասիրական զգացմունքով։ Նա մի տեսակ կասկածանքով է նայում նայում դէպի Բիսմարկը, թերևս աւելի խորը մտածելով... տարակուսելով, թէ մի գուցէ Բիսմարկի ստեղծագործութիւնը ապագայում փոխանակ քաղաքակրթական նպատակին ծառայելու, մոլորէ ուղիղ շաւղից և մի չարիք դառնայ հազիւ դէպի լուսաւորութիւնը ձգտող մանրիկ, թոյլ ժողովուրդների համար։

Անեկդոտներ

Կան մարդիկ, որ նման են բանիաստմսի, որոնք ընդունում են դրամարժէքով (կուրսով) եւ ոչ թէ իրանց սովորական գնով։

Լա-Բօշֆուկօ

Պաստմութիւնը դասաբողոք է ժամանակակից մեղանչումների դէմ, որ տուում է ապագայ սերունդի դատաստանին։

Սեգիւր

Ամեն կեանքի մէջ մագլցելով են հասնում բարձր դիրքի, ինչպէս ծխնելոյզ մաքրողները, որ սողալով անցնում են մութ, նեղ ծուցիչ, աղտոտ խողովակներով եւ ամբողջովին ծածկուում են մրով։

Գէօթէ

Ապերախտ մարդու սիրտը նման է անապատի, որ կլանում է անձրեւը եւ երբէք ոչինչ չի արտադրում։

Որից Տալիթ-բէյ

Քննադատութիւնը այն ժամանակ է միայն արդիւնաւոր, երբ նա, դատապարտելով հանդերձ, ցոյց է տալիս, թէ ինչպէս պիտի լիներ այն, ինչ որ կայ է։

Լ. Տօլստոյ

Այլ եւ այլ

Ամերիկայի մի գիւղի մօտով պիտի անցներ երկաթուղու գիծը, որի համար գիւղացիները ուրախ էին, այլի առաջ ունենալով, որ աշխատանքի մի բանի նոր առիթներ եւ աւելացուցը։

Սակայն մի գեղեցիկ օր նրանց հաղորդեցին, թէ երկաթուղային վարչութիւնը գծի ճանրան փոխել է ինչ-ինչ պատճառներով եւ այնուհետեւ գիւղից 10 մղոն հեռու է լինելու։

Գիւղացիները իսկոյն խորհուրդ կազմեցին եւ այդ խորհրդում որոշեցին հետեւեալը։

„Քանի որ երկաթուղու գիծը հեռանում է մեզանից եւ չի գալու, մնում է որ մենք գնանք նրա մօտ։“

Եւ իսկապէս հենց այդպէս էլ անում են։ Երեք օր անցած՝ նրանք իրանց տներն, խանութները, ուսումնարանները ու եկեղեցիները բանդեցով եւ ձիաներ վրայ յարձակով, գնացին որոշած տեղը։

Կիսօրին ընդհանուր մաղթանքից յետոյ, ամբողջ գիւղը երգերով, տեղական հոգեւորականութեան առաջնորդութեամբ, առաջ շարժուեցաւ։

Ճորրորդ օրը, երբ տեղ հասան եւ սարի ու կարգի մէջ գցեցին իրանց շինութիւնները, արդէն սկսեցին վակզալ շինել։

Եւ այնուհետեւ շարունակեցին իրանց սովորական կեանքը։ Դիւղն ունէր 974 տուն ժողովուրդ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Տարազի ներկայ №-ի հետ ուղարկում ենք պատրաստած նամակները և ծրարներ արտասահմանի և քաղաքիս բաժանորդներին։ Նոյն ծրարներից ուղարկում ենք և մեր գաւառական բաժանորդներին խնդրելով, որ իրանց ծանօթ չրջաններում առաջարկեն աստրագրելու Աղբիւր-Տարազին։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բագու. Մ. Դ. Ստացել ենք. դեռ չենք կարդացել։

Լոնդոն Ա.Ֆ. Հ. Յանում ենք, որ **Սուճօի** կիրճէն այդման ուշ մեզ հասաւ (տպագրելուց 2 օր առաջ) եւ ժամանակին չկարողացանք լոյս ընծայել։ Պրէյկուռանցի մէջ № 1504 նկարի կիրճեն միթէ չէ՞ ստացել։

Բագու. Ա. Թիւր հասկացողութիւն է կազմած մեր ժողովրդի մէջ։ Մի վայրկեան ենթադրենք հէնց նիյս որ իրաւացի ենք այն յարձակումները, բայց միթէ մենք իրաւունք ունենք դատափետելու եւ ծաղրելու։ Ընդհակառակ որդիական պատկառանք եւ կարեկցութիւն, անսահման սիրոյ առհաւատչեանք պէտք տանք...Նոյ երբ արբած մերկ պառկել էր, նրա գաւակը ոչ թէ ծաղրեց նոր դրութիւնն ու մերկութիւնը, այլ վերմակով ծածկեց եւ քողեց միւնչեւ նա արթնացաւ։

Ն. Նախիջեւան. Լ. Մ. Լրագիրը ոչ մեղադրող, *պրոկուրար* է եր ոչ պատճան *հրդեհաց հաւատարմատար*։ Լրագիրը միմիայն *ճշմարտութիւնը* պիտի արձանագրէ եւ լուսաբանէ փատը։ Տեղեկութիւն եթէ չենուած չէ ճշմարտութիւնների վրայ, արդէն իսուսնացիաների շարք պէտք է գցել։

Չէնց այդ հիման վրայ մենք դեռ չենք ամապատում տպագրել այն խայտառակ սիրագործութիւնը, որ նորես լրագիրներ երեսաց հանեցին։ Սպասում ենք գործի աւելի լաւ լուսաբանելուն։

Պետերբուրգ. Ե. Թ. Ձեր պահանջած վկայագիրն ստղարկեցինք։

Ախալքալաք. Զ. Տ-Դ. Ստացած է գործերի ատիարհում յօդուածը։ Տալելուն քող չընայէ։

Ախալքալակ. Ս. Ձեր հարցերին պատասխանեցինք պատով։ Ընորհակալ ենք Ձեր աջակցութեան համար։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. Նաւասարդեանի

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ) հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

Առաւօտեան ը՝

Բ. Ա. Նաւասարդեան 11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. Չիկովանի—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Կիև-բժիշկ Դուննայեա Բաւգենիւ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. Պոռտասեւիչ 12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. Փուղինեան—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա Պ. Կարապետեան—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Երեկոեան ը՝

Պոռտասեւիչ—5—6 ժ երեքշ. հինգշ. և շաբաթ.

Ա. Մ. Փուղինեան—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. Գուրկո—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Ա. Գ. Գուրկո քիմիական և խոշոբացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար ա՝ անձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Նաւասարդեան

Открыта подписка на 1898 годъ, на ежедневную политич. и литературную газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(ПЯТНАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

Въ 1898 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисѣ, какъ и прошлые годы, ежедневно, по программѣ большихъ столичныхъ газетъ.

Въ истекающемъ году, въ газетѣ кромѣ мѣстныхъ силъ, участвовали также **Е. С. Баранцевичъ, В. В. Вересаева, В. К. (Петербург. корресп.), Л-овичъ, (Лондон. корресп.) Д. Н. Маминъ-Сибирякъ, М. А. Протопоповъ, Академикъ Тархановъ, В. Е. Чешихинъ, А. С. Хах-овъ и другіе.**

Условія подписки съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на 3 мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ перваго числа любого мѣсяца). Для сельскихъ учителей и благотворительныхъ учрежденій плата пониженная: на годъ—7 р., на полгода—4 руб.

Для годовыхъ подписчиковъ какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Лица, подписавшіяся на годовое изданіе „Новаго Обозрѣнія“ 1896 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году со дня подписки.

Подписка принимается *въ Тифлисѣ*—въ ред. газеты «Нов. Обозр.» Барятинская, № 8. Обм. 1—3

„ВѢСТНИКЪ ИНОСТРАННОЙ ЛИТЕРАТУРЫ“

ежемѣсячный литерат.-историч. журналъ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ

Подписчики „Вѣстника Иностранной Литературы“ получатъ при январской книгѣ 1898 г. **безплатное отдѣльное приложеніе** первое на русскомъ языкѣ Общедоступное изданіе **полнаго собранія (сто) новеллъ**, составляющихъ „ДЕКАМЕРОНЪ“ ДЖОВАННИ БОККАЧЧІО, большой иллюстрирован. томъ (свыше 650 стр.).

Въ ноябрьской книгѣ 1897 г. начатъ печатаніемъ новый романъ **Эмиля Зола—ПАРИЖЪ.** Въ январской и послѣдующихъ книгахъ „Вѣстника“ 1898 г. будутъ помѣщены новые романы АЛЬФОНСА ДОДЭ, ПОЛЯ БУРЖЕ, ПЬЕРА ЛОТИ и МАРСЕЛЯ ПРЕВО; новый романъ наиболѣе выдающагося изъ современныхъ испанскихъ беллетристовъ **Переса Гальдоса**; новыя произведенія даровитѣйшихъ юмористовъ: **Марка Твена, Франка Стоктона и Джерома К. Джерома;** только что появившееся и встрѣченное единодушными похвалами англійской печати посмертное произведеніе родоначальн. новѣйш. „сенсаціоннаго“ ром. **Р. Стивенсона**; наиболѣе выдающіяся новѣйшія произведенія **итальянской, датской и шведской** литературъ; очеркъ современной **финской** литературы въ образцахъ, выбранныхъ изъ произведеній ея талантливѣйшихъ представителей; этюдъ **„Парижская любовь“**, принадлежащій перу **Горона**, автора печатающ. въ „Вѣстникѣ“, „Запискахъ“ и друг.

Впервые на русскомъ языкѣ появятся въ „Вѣстникѣ“ въ 1898 г. лучшая изъ новеллъ **Сервантеса** и лучшіе изъ знаменитыхъ „Кентерберійскихъ разсказовъ“ **Джеффари Чосера**, великаго писателя конца XIV вѣка, этого своеобразнаго англійскаго Боккаччіо. Г.г. служащіе въ казенныхъ и частныхъ учрежденіяхъ пользуются разсрочкою, за поручительствомъ г.г. казначеевъ и лицъ, завѣдующихъ подпискою.

Несмотря на то, что объемъ „Вѣстника“ постепенно увеличился вдвое,

ПОДПИСНАЯ ЦѢНА на 1898 г. ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ:

съ доставкою и пересылкою 4 р., безъ доставки и пересылки 3 р. 50 к. Желающіе получить **„Декамеронъ“ Д. Боккаччіо въ перепл. приплачиваютъ 50 к.**

Адресоваться въ редакцію, С.-Петербургъ, Верейская ул., домъ № 16, собствен.

Издатель *Г. Ѳ. Пантелеевъ.* Редакторъ *С. С. Трубачевъ.* Обм. 3—1

Լոյս ընծայեց

Աղբիւր-Տարազի հրատարակչութիւնը

Ա. Լ.

ՍՈՓԻԱՆԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Գինը Է. 50 կ.

Ծախւում է Տարազի գրասենեակում հայ գրավաճառանոցներում.

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր և Տարազի 97 և 98 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Պիտի՝ Тифлисъ, агбюръ кам Таразъ.

Արդէն բարմանել եմ

Տակարեօվի

ՓԱՓԱՆՉԻՄ

Պատմական դրամա

Գ. Բարուրեանց

ОДЕССА.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ

(9-й годъ изданія)

на общедоступный медицинскій журналъ

„АКУШЕРКА“.

24 №№ въ годъ (въ 12 книжкахъ)

подписная цѣна съ пересылкой

НА ГОДЪ 3 РУБ.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ

1) Въ редакціи журнала «Акушерка» въ Одессѣ.

(адресъ почтъ извѣстенъ).

2) Во всѣхъ книжныхъ магазинахъ.

3) Во всѣхъ почтовыхъ конторахъ съ наложеннымъ платежомъ.

Экземпляры «Акушерки» прежнихъ лѣтъ въ сброшюрованныхъ книгахъ продаются: 1890, 1891, 1892 1893, 1894 и 1895 г.г. по **одному рублю** за книгу, 1896 и 1897 г. подписывающихся и 1898 г. по **два** руб. за экземпляръ, для прочихъ же по три руб. (Всѣ цѣны съ пересылкой).

РУКОВОДИТЕЛЬ ПОВИВАЛЬНОЙ БАБКИ

Д-ра

АРТЕМЬЕВА

высылается за 30 коп.

(можно почтовыми марками). Съ требованіями обращаться прямо въ редакцію «Акушерки» въ Одессу.

3—2 Обм.

ԲԱՑԻԱՁ Է 1898 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XVI ԱՂԲԻՒՐ XVI IX ՏԱՐԱԶ IX

Միամեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար:

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար:

Կրճատարուկեն նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ:

ԾՐԱԳԻՐ

Աղբիւրը լոյս է տեսնում իւրաքանչիւր ամիս 2—3 թ., տարեկան 12 №№:

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն: Գիտութիւն եւ արուեստ: Նոր լուրեր. Այլ եւ այլք: Զարմանալիք, Մանկական, Փիւորէլեան, շախմատի եւ այլ խաղեր, րեբուսներ, Թատրանական խնդիրներ. Անեկդոտ, Հանելուկ, Երգեր նոտաներով:

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ եւ տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսութիւն եւ նոր գրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ:

Տարազը լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—2 թերթ. տարեկան 48—50 №№:

Գեղարուեստ եւ գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ. Թատրոնական գրուածքներ: Հանրատեղեկութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կարճ, ծիւ, ծեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային, արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ Թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Ծաղածներ եւ այլն: Փիլիետօն, ծաղր, առած եւ կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, Րեբուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ: Յայտարարութիւններ:

Այն ծնողը, որի համար թանգ է իր զաւակի մայրենի լեզուով թոթովելը, թող ամենայարէ ԱՂԲԻՒՐԻՆ բաժանորդ գրուի:

Այն հայ րնտանիքը, որ կամենում է քարի եւ գեղեցկի, գիտութեան ւ գեղարուեստի ուղիով ընթացնալ, նա թող հանի ՏԱՐԱԶ ամենայն:

Հեռու առօրեայ, աշխարհային ինտրիգներից, նուիրուած գեղեցկին եւ ճշմարտին՝ հայ գրականն անդամատանում ՏԱՐԱԶԸ մեծ պարտք եւ դեր ունի կատարելու... ՏԱՐԱԶԸ հասունացած հայ պատանիների, երիտասարդների եւ նոյն իսկ ծերերի թէ դպրոցն է, թէ թախծալից ժամերին նրանց բարեկամը:

Առաջիկայ 1898 Թ. կրտպագրեւն **Տարազում** ի միջի այլոց **Էմիլ Զոլայի** նշանաւոր տեսած այնքան մեծ աղմուկ է հանել աշխարհիս բոլոր գրական աշխարհում եւ մինչ տպագրում է եւրոպական բոլոր լեզուներով: Բացի այդ կրտպագրեւն մի շարք որոնց թուումն է՝ եւ՝

ՊԱՐԻԶ վէպեր, որ դեռ լոյս չէ ժամանակ բնագրի հետ վէպեր եւ պօէմաներ, շատ մեծ վէպ, **Բագ-ի, գործարանա՝ւան**

ԱՒԱՇԱԿ **ծաւորների կեանքից:**

Ե. ԳՐԱՆՑ ԳԱՂՏՆԻՔԸ վէպ Կ. Պոլսի սուլթանների կեանքից: Քաղաքական եւ ներքին աշխարհ Տաճկաստանի, ազգային սահմանադրութիւն: Ընիչէրներ, վէզիրներ, հոգեւորականութիւն եւ ժողովուրդ:

Աղբիւրի մէջ կրտպագրեւն **ԼԷՕՆ ԿԱՅՍՐ** հրահանգիչ-դաստիարակիչ մանկական վէպ եւ մի շարք պատմական պօէմաներ. Ինդիտական բաժինը Աղբիւրի 1/3-ական մասը կրկազմէ:

Մանուկ հասակին ընթերցանելու հէքիաթներն ու զրոյցները բնտրուում են շատ մեծ խնամքով:

Մանկավարժական յօդուածներ դաստիարակների եւ ծնողների համար կրտպագրեւն, առանձին թերթերով, եթէ բաժանորդների թիւը 1000-ից անցնի:

Առաջիկայ **1898** Թ. Աղբիւրի չորս անգամ մեծ գիրքով, 24 որի նմանը մինչեւ այսօր չենք

պրէմիան մի շատ շքեղ **ԱԼԲՈՄ** է, Աղբիւրից գոյնզգոյն բուն գեղարուեստական նկարներով, ընծայաբերել մեր բաժանորդներին:

ՏԱՐԱԶԻ պրէմիան—**ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** *մի մեծադիր խրոմո-օլէօգրաֆ է, սքանչելի պատկեր: պատրաստուած Եւրոպայի ամենանշանաւոր գործարանում, փառաւոր զարդ հայի դահլիճին:*

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ հանդէսները ունին աշխատակիցներ Պետերբուրգում, Մոսկուայում, Պարիզում, Վիէննայում, Վենեթիկում, Լոնդոնում, Բեռլինում, Ժընեւում, Կ. Պոլսում, Հնդկաստանում, Սիբիրում, Ամերիկայում, Ռուսաղէմում, Էջմիածնում, Հռոմում, Բուկարիայում, Եգիպտոսում եւ Կովկասի բոլոր բաղաքներում:

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը **3** **ՌՈՒԲ.** Անցնող 1897 Թ. այդ բոլոր երկերները տպագրել են յօդուածներ **Աղբիւրում** եւ **Տարազում** ու պատկեր- ներ այդ հանդէսների համար բացառապէս պատրաստուում են Եւրոպայում: **ԱԼԲՈՄ** *պրեմիայով. չորս r.* (արտասահման 5 r կամ 12 ֆր.). **ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** *պրեմիայով* **եօթը** *r.* (արտասահման 10 r. կամ 30 ֆր.) **ՌՈՒԲ.** **6** տարեկան գինը

Պրէմիաները կ'ուղարկուեն բաժանորդներին Աղբիւր եւ Տարազի յունուարի №№-ի հետ:

Իւրաքանչիւր պրեմիան առանձին արժէ 3 r.: Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, երկու պրեմիաների փոխարէն պարտաւոր պիտի է վճարի միայն մէկ rուբլի:

Պրէմիաները տացուում են տարեկան բաժանորդագիրը լիովին վճարելուց յետոյ:

Հասցէ՝ **ТИФЛИСЪ** редакція иллюст. жур. **АГБЮРЪ-ТАРАЗЪ** *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

Дозв. ценз. Тифлисъ, 29 ноября 1897 г. *Տպարան Ե. Մարտիրոսեանցի.* Тип. И. Мартиросіанца. Орбел. ул, № 1—2.